

5.16. 2007թ. հունիս ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հունիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 1-1.5 աստիճանով:

Մայիսի I և II տասնօրյակներում միջին տասնօրյակային ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1-2 աստիճանով (ՀՀ Սյունիքի մարզում՝ 2-3 աստիճանով), III տասնօրյակում ցածր է եղել 0.5 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում կազմել է +29 +31°C, Սյունիքի հովիտներում՝ +28 +30°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +23 +26°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +20 +24°C, լեռնային շրջաններում՝ +20 +22°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունիսի 19-ին, 24-ին և 28-ին: Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում գրանցվել է +32 +34°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +27 +31°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +25 +28°C, լեռնային շրջաններում՝ +21 +24°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +15 +19°C, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ +15 +16°C (ք.Դիլիջանում՝ +11°C), Սյունիքի նախալեռներում՝ +11 +12°C, ՀՀ Լոռու մարզում և լեռնային շրջաններում՝ +8 +11°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ +5°C):

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունիսի 12-ին, 23-24-ին և 26-27-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է +2 +7°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +8 +13°C, Արարատյան դաշտավայրում՝ +11 +14°C, Սյունիքի հովիտներում՝ +12 +16°C:

Հունիս ամսին տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում այն կազմել է նորմայի 100-150%-ը (Աշոցք գյուղում՝ 91%), Արարատյան դաշտավայրում՝ 100-120%-ը (ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 45%), ՀՀ Տավուշի մարզում՝ 80-97%-ը, ՀՀ Սյունիքի մարզում՝ 40-70%-ը (ք.Մեղրիում՝ 4%):

Հունիսի 3-4-ին, 8-ին, 11-12-ին և 17-20-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է անձրև և ամպրոպ:

Հունիսի 1-ին և 29-ին ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ), 7-ին և 11-ին՝ ք.Ստեփանավանում (ՀՀ Տավուշի մարզ), 11-ին՝ ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ), 29-ին՝ ք.Թալինում և ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ), ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ), ք.Երևանում առանձին օրեր դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 13-18 մ/վրկ, պոռթկումները՝ 16-28 մ/վրկ (ք.Իջևանում՝ 36 մ/վրկ): Հունիսի 7-ին, 10-ին և 15-ին Պուլշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ), 26-ին՝ Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ) դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 50-200 մ: Հունիսի 2-ին ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ) և ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ), 7-ին՝ Ուրցածոր գյուղում (ՀՀ Արարատի մարզ), 29-ին՝ ք.Դիլիջանում, ք.Ապարանում, ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) դիտվել է կարկուտ, տրամագիծը՝ 6-14 մմ (ք.Ապարանում՝ 21 մմ, Ուրցածոր գյուղում՝ 25 մմ): Հունիսի 10-ին ք.Ստեփանավանում դիտվել է ուժեղ անձրև, ինտենսիվությունը՝ 31 մմ/1 ժամ 10 րոպե:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Հանրապետության հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջանների գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-120%-ը, իսկ մնացած շրջանների գետերում՝ 50-70%-ը:

Սևանա լճի մակարդակը հունիս ամսվա ընթացքում բարձրացել է 10 սմ-ով և 2007թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել 1898.97 մ, որը 2006թ. նույն օրվա համեմատ բարձր է 39 սմ-ով: Հունիսի 11-ից սկսվել է Սևանա լճից ջրի բացթողումը և ամսվա ընթացքում այն կազմել է 18.422 մլն. խոր. մ: